

արեւելք բերած ըլլան Չին, անշուշտ նոյն-
պէս խնդրական կէտ մըն է: Բայց սակայն
որոշ է թէ Հնդկիկերոպացիք արդէն իրենց
մայր հայրենեաց մէջ ձիարոյծներ էին, եւ
խնդիր չկայ դարձեալ թէ իրենց Այրուսին էր
ա՛յն գլխաւոր գէնքը՝ որով տիրեցին Լուվեր-
Հաթեր ու Արիք եւն՝ Փոքուն Ասիոյ եւ միւս
աշխարհաց: Յամենայն դէպս Հաթեր մեծ
ձիարոյծներ էին, եւ իրապէս կարեւոր կէտ
մըն է թէ հնագոյն ձիարուծական կամ ձիա-
մարզական գրուածքը գտնուած է Բողազ-
քէօյի դիւանին մէջ (Կիլիկիոյ Միտանաց-
ւոյ անուամբ), հաթերէն՝ բայց հնդկիկ-արիա-
կան ստուիւթներով խոսնուած: Ասի կա-
րեւոր կէտ մըն է: Բեւեռագրական ու մե-
հնագրական բովանդակ հին մատենագրու-
թեանց մէջ եղական է այս գրուածքը, եւ
այն՝ յորինուած Փոքուն Ասիոյ տիրող հըն-
դիկերոպական տարրին կողմանէ եւ անոր
կազմակերպած Ձիամարզարանին համար,
ուր կը կատարուէին Ձիարշաւներ: Անշուշտ
բանակի կամ այրուծիոյ պիտոյից համար էր
այս ամէնը, որ կ'ենթադրէ Ձիարուծութեան
մեծ զարգացում մը: Այս Ձիարուծութիւնն
ի հարկէ շարունակուած է նաեւ այնուհե-
հետեւ, գոնէ տեղ տեղ, նոյն իսկ երբ Հա-
թեան մեծ պետութիւնն այլ եւս գոյութիւն
չունէր, այլ մնացած էին միայն մանրապե-
տութիւններ, եւ երեւան եկած էին ինչպէս
հնդկիկերոպական նոր գաղթականութիւն-
ներ, նոյնպէս առհասարակ նոր աղբեր:
Ի վերջոյ այս Ձիարուծութեան արդիւնքն է
անշուշտ, երբ նաեւ յետոյ կը լսենք Տեգա-
րամայ (Թիլգարիմուրի) համար թէ «Եւ ի
Տանէ Թորգոմայ՝ ձիով եւ հեծելով եւ
զորով լցին զվաճառս քո» (Եղեկ. Իէ, 14),
այսինքն՝ Տիւրոսի¹⁹⁵:

ձիու մասին՝ էջ 152—234, զրբին զրբի կէտը:
Նաեւ այս հեղինակը ստիպուած էր գրել թէ «ձիւն
է թէ բոլորովին սպանով սպացոյց մը չունենէ միւս
գոյութեան, թէեւ արդէն Ուրի «արքայական գերեզ-
մաններուն» մէջ Ջորիմ սպացուցուած կ'երեւայ» եւն:
Մնացեալ խորհրդածութիւնք այս խնդրոց մասին ա-
ւելորդ են մեզի համար այս տեղը: — Բացի Woolleyի
գրութեանէն յիշուած են ի միջի այլոց գրուածքներս՝
A. Ungnad, Die Ausbreitung des Pferdes:
ZDMG, LXXVII, 1923, p. 81—91. — B. Meißner,
Das Pferd in Babylonien. Leipzig 1913 (Assyriolog-
Studien, Bd. VI). — Իւր՝ Babylonien und Assyrien
(Heidelberg 1920), p. 218; Իւր՝ Die ältesten Völker-
wanderungen Vorderasiens (Breslau 1923), p. 189 ff.
— August Köster, Die Herkunft des Pferdes
bei den Babyloniern: «Janus», I. Festschrift für
Lehmann-Haupt (1921), p. 158 ff.

¹⁹⁵ Հայ բնագրիկն՝ ընդհանուր ստամբ Ասորա-

Բաւ կը համարինք այսչափն, եւ հոս
չենք յիշեր նոյն Հեղինակին ուրիշ գրուածք-
ները¹⁹⁶: — Ի վերջոյ նշանակենք թէ Սու-
մերականին համար նոր հրատարակուեցին-
ներ ի հարկէ բաղմաթիւ են, ինչպէս կան
յաւելլիք նաեւ միւս խնդրոց մասին: Բայց
արդէն նշանակուածները՝ կարծենք՝ լրովին
բաւական են մեր նպատակին համար¹⁹⁷:

(Շարունակելի) Հ. Յ. Տ.



կանին համեմատ է (որ ունի վերջը՝ «... եղեն քեզ ի
վաճառ»): — սովորական Յունականը չունի «Ջոր-
ուով» իսկ «ի վաճառ»՝ հրապարակ, չուկայ իմաս-
տով է (յն. agora). — տեղոյս չէ բնագրիս մասին
աւելի մանրամասնութեանց մէջ մտնել:

¹⁹⁶ Սակայն յիշենք գրուածքս՝ M. Minasi-
an, A new Interpretation of the History of Civil-
isation: «Massis», Vol. I, Nr. 10 (1929), p. 227—
229; Nr. 11, p. 253—256 (I—II).

¹⁹⁷ Հմմտ. սակայն A. Deimel, Sumerisches
Lexicon, Teil I: Lautworte der Keilschriftzeichen in
sumerischen, akkadischen und hethitischen
Texten. 2. Aufl. Rom 1930, pp. VI + 162 + 38. —
Իւր՝ Codex Hammurabi, Denuo in lucem
editus ab A. Deimel, Fasc. 1—3 (I. Textus pri-
migenius signis cuneiformibus excerptus a R. Wes-
sely. — 2. Transcriptio et Translatio latina. —
3. Vocabularium alphabeticum cum Indice etc.).
Romae 1930, 49, pp. 43 + 42 + 47 (Scripta Pontif.
Inst. Bibl.). — Woolley C. L., Digging up the
Past. London 1930, pp. 144. — Jean Ch.-F., La
Religion sumérienne d'après les documents sumé-
riens antérieurs à la dynastie d'Isin (2186). Paris
1931, pp. XVI + 255; avec 32 planches. —
Bushnell G. H., The world's earliest libraries.
Lond. 1931, pp. 58. եւ բաղմաթիւ այլ երկեր,
որոնցմէ մին կամ միւսն առիթ պիտի ըլլայ այլուր
յիշելու: — Ուրիշ կարգի գրուածքներէն (որոնցմէ
մաս մը յիշեցինք՝ § 8) կրնանք յաւելուլ՝ Barton
G. A., A comparative list of the signes in the so-
called Indo-Sumerian seals: «the Annual of the American
Schools of Oriental Research», ed. by H. J. Ca-
dbury, Vol. X (1928—1929). New Haven 1930,
pp. IX + 194. — Իսկ նախընթաց հատուածներուն
համար իւր օրինակ յիշուի գրուածքս՝ Fr. von
den Velden, Das Baskische eine afrikanische
Sprache: «Litterae Orientales» (O. Harrasso-
witz). Leipzig 1931, Heft 48, p. 1—6. — Թողով
յիշել ուրիշ մատենաներ:

**ՀՐԵՅՏԵՎՆԵՐՆ ՈՒ ՍԵՏԱՆԵՆԵՐԸ ՀՈՅ
ՓՈՂՈՎՐԳԻԿԱԿԱՆ ՀՈՒՍԵՏՔԻՆ ՄԷՋ**

Հրեշտակներուն եւ սատանաներուն մեծ
զերեր կու տայ սին հաւատքը: Անոնք եր-
կու հակամարտ աշխարհներու ներկայացու-
ցիչներն են, որոնք վճռականապէս կ'ուզեն
մարդ արարածն իրենց կողմը շահել¹:

Եղնիկի քով՝ բաւական տեղեկութիւն կը
գտնենք այս մասին իրեն ժամանակակից սին
հաւատքի մէջէն: Ուստի կ'ուզենք աւելի մօ-
տէն ուսումնասիրել այս նիւթը. եւ դիւրու-
թեան համար՝ հրեշտակներու եւ զեւերու
մասին հատորգուածները երեք գլխաւոր տե-
սակէտներով կ'ուզենք նկատել. 1. Հրեշտակ-
ներն ու սատանաներն ընդհանրապէս. 2. Հրեշտակները. 3. Սատանաները:

1. Հրեշտակներն ու սատանաներն ընդ-
հանրապէս: Այս ոգիներու հոգեկան գոյա-
ցութեան մասին յետոյ մանրամասնաբար
պիտի խօսինք. առ այժմ՝ այսքանն ըսենք, որ
ժողովուրդը զանոնք թէ՛ նիւթական եւ թէ՛
աննիւթական կ'երեւակայէ:

Հրեշտակներն ու զեւերը կ'իշխեն մթնո-
լորտային երեւոյթներու վրայ. «... հրեշտակը
եւ զեւը... կարող են զօղս գնդել եւ պար-
զել» (119):

Երկու տեսակ ոգիներն ալ հոգէտու պաշ-
տօն կը կատարեն: Կողբացին ցոյց տալ
կ'ուզէ ուսմիկն, որ սատանան հոգէտու չէ՝
իրենց կարծիքին համաձայն. անոր համար
կ'ըսէ. «Բայց ընդէ՞ր ոչ նա (զեւ), այլ հրեշ-
տակ Աստուծոյ եհար զանդրանիկան եզրա-
տացուց, եւ բազում անգամ զՀրեայսն յա-
նապատի անդ: Ձի եթէ նա յայն եզեալ էր,
ընդէ՞ր ոչ նայն հարկանէր՝ այլ հրեշտակ»
(174—175):

Ժողովուրդին խոր համոզումն է, որ
այդ ոգիները սեռային յարաբերութիւններ
կրնան ունենալ եւ կ'ունենան. «Այլ հրեշ-
տակը եւ զեւը ո՛չ յաւելուած ծննդեամբ առ-
նուն, եւ ո՛չ պակասութիւն մահուամբ. այլ
որպէս հաստատեցանն՝ նոյնպէս եւ նովին
թուով կան, առանց յաւելուածոյ եւ նուա-
զութեան (118): Եթէ անմարմինք էին (աս-

¹ Բնական է՝ արդէն կարելի է ենթադրել, որ
հրեշտակներն ու սատանաները նախաբնութեան
ոգիներու զերն ստանձնած են: Այս խօսքը մանաւանդ
կ'արժէ սատանային համար, որ չի կրնար հեթանոսա-
կան շրջանին վերաբերած ըլլալ: Իսկ «հրեշտակ»
բառը նախաբնութեան է եւ պահպանուած է փո-
խաւութիւն:

տուածներն ու ոգիները), չէր մարթ ան-
մարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուս-
նանալ: ... Եւ որպէս ոչ գոն ծնունդը
զիւաց, նոյնպէս եւ ոչ մահ (117—118): Եւ
արդ ո՞ւր իշխեցեն շնչել, որ ասեն՝ թէ
հրեշտակը ընդ կանայս ամուսնացան, զի
նոքա հրեշտակը կոչին եւ մարդիկ խոտեղէն»
(106):

Բարի եւ չար ոգիներու մասին ժողո-
վրդական այս երեք հայեացքները յաջորդա-
բար պիտի ուսումնասիրենք:

2. Հրեշտակները: Հին եկեղեցւոյ մէջ
չատ տարածուած ուսմիկ հայեացքի մը հետ
կապ ունի՝ ինչ որ Եղնիկ հրեշտակներու ա-
մուսնութեան մասին կ'ըսէ ժողովրդեան
կողմէն:

Այս ըմբռնումը հրեշտակն աղբիւրէ
բխած է եւ յատկապէս Մնեղոցի (Չ. 2—5)
հետեւեալ տեղիքին հետ սերտ աղերս ունի.
«Տեսեալ որդուցն Աստուծոյ զգատերս մարդ-
կան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս
յամենեցունց զոր ընտրեցին... Եւ յետ այ-
նորիկ իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ առ
գատերսն մարդկան, եւ ծնան իւրեանց որ-
դիս. նոքա էին սկայքն, որ յաւիտենից արք
անուանիք»: Յառաջբերութեանս «որդիք
Աստուծոյ» բացատրութիւնը հակնալու կեր-
պէն կախուած է հայեացքի եղանակաւոր-
ումը: Եօթանասնից մէկ հին ընթեր-
ցուածն² ունէր. «Աստուծոյ հրեշտակները
տեսան, որ գեղեցիկ են...»: այս ընթեր-
ցուածին վրայ յեցած՝ Փիլոն, Յովսէպոս,
Յուստինոս, Տերտուլիանոս եւ ուրիշներ կը
համարէին թէ հրեշտակներու կը հայի
խօսքը: Իսկ անոնց կ'ընդգրկեմանային ուրիշ
եկեղեցական հեղինակներ. թէեւ խնդրական
տեղիքը դժուարաւ թէ ուրիշ կերպով մեկ-
նուէր՝ լեզուական տեսակէտով: Այս վեր-
ջինները, որոնց մեկնութիւնը վերջնական
յարթանակը տարաւ, «որդիք Աստուծոյ»
ըսելով՝ Աթի բարեպաշտ որդիները կը
հասկնային, իսկ «որդիք մարդկան» անունին
ներքեւ՝ Կայնի ամբարիշտ սերունդը կը
տեսնէին:

Փիլոն³ յետագայ կերպով կը խորհրդ-
գածէ հատուածին վրայ. «Ընդէ՞ր ի հրեշ-
տակաց եւ ի կանանց հակայքն: — Քերթոյք

² Reischl, Die heiligen Schriften, I. Bd., Re-
gensburg 1867, 9:
³ Փիլոնի պնդելի որ ի լինելութեան խնդրոց
եւ լուծմանց, վենետիկ 1826, 66:

զհակայսն երկրածինս պատմեն երկրի մանկունս: Իսկ սա պիտակարար եւ յաճախ առնուամբը, կամեցեալ ցուցանել զառաւելութիւն մեծութեան մարմնոց, եւ հայկազափեալ խառնակ յերկուց պատմէ զոտոց լինելութիւն, ի հրեշտակաց եւ ի մահկանացու կանանց... Բազում անգամ... նմանին մարդկան, որպէս յաղագս առ կանայս զիտանալոյ ի հայկից ծնունդ»:

Ս. Օգոստինոս⁴ Եօթանասնից յիշուած ընթերցուածին համաձայն յառաջ կը բերէ խնդրական տեղիքը (զոր սակայն երկրորդ կարգի մեկնիչներուն համեմատ կ'ըմբռնէ)՝ «Videntes autem Angeli Dei filias hominum, quia bonae sunt, sumpserunt sibi uxores»: Մինչ Vulgata ունի. «Videntes filii Dei filias hominum...»:

Սակայն կայ նաեւ ուրիշ ազգակ մը, որ հայեացքիս զարգացման եւ լայնածաւալ տարածման մեծապէս նպաստած է: «Ենովքի Կրքին»⁵ մէջ պատմուած հետեւեալ կտորն է՝ «Եւ պատահեցաւ որ՝ երբ այն օրերուն մարդկան որդիները բազմացան, անոնց զեղեցիկ եւ ազնիւ դուստրներ ծնան: Եւ հրեշտակները, երկնքի որդիները, զանոնք տեսան եւ անոնց ցանկացին եւ իրարու ըսին. «Օ՛հ, մեզի կիներ ընտրենք մարդկան որդիներու մէջէն եւ զաւակ ծնանինք»: ...Ասոր վրայ երգուցան (որ ըսածնին պիտի ընեն): Եւ իջան Արդիսի վրայ, որ Հերմոն լեռան գագաթն է... Եւ կիներ աւին, եւ իւրաքանչիւր մէկն իրեն համար կին մ'ընտրեց, եւ անոնց հետ սկսան երթալ, եւ անոնց հետ խառնուեցան... Իսկ անոնք յրացան եւ մեծ հսկաներ ծնան, որոնց բարձրութիւնը 3000 կանգուն էր»:

Ենովքի կոչուած այս անկանոնական դրութիւնն է, որ առաւելապէս նպաստած է հրեշտակներու մասին կազմուած այս գաղափարին եւ ան ժողովրդական հաւատարիքներու մէջ պատրաստ գետին գտնելով, առանց արգելքի ընդգրկուած է:

3. Սատանաները: Այս ոգիներու մասին Եզեկի բաւական առատ նիւթ կը հայթայթէ մեզի: Ատաղձը կրնանք սա չորս կէտերուն բաժնել: ա. Սատանաները չարի արարիչ են:

բ. օգի կամ մթնոլորտի վրայ կ'իջնեն. գ. մարդուն այսահարութիւն, հիւանդութիւններ եւ մահ կը պատճառեն. դ. չար երազներ յառաջ կը բերեն:

ա. Սատանաները չարիս արարիչ: Ժողովուրդին աչքին ինչ որ իրապէս կամ երեւութապէս վնասակար ու չար կ'երեւար, չար աստուածութեան մը կը վերագրուէր, որ այդ բանը յառաջ բերած է՝ պարզապէս իրեն ընդդիմադրութեան արարածներուն վնասելու համար: Հայն իրբեւ արեւելեան արիներու ընտանիքին մէկ անդամը, ո՛չ միայն անյիշատակ ժամանակներէ ի վեր ընտելացած էր այս հայեացքին, այլ եւ յիշատակելի ժամանակներու մէջ՝ պարսիկ ցեղին կից ապրած էր, քաղաքակրթօրէն անոր ազդեցութեան ենթարկուած, նաեւ կրօնական հայեացքներուն հաղորդ: Ուստի եւ պէտք չենք զարմանալ, երբ այս երկուորականութեան հոգին կը տիրէր ժողովուրդին վրայ՝ Եզեկի օրով: Հեղինակիս ինչ ինչ հատուածներէն կը տեսնենք, թէ հեթանոսական չար աստուածութիւններուն դերը՝ սատանաներն ստանձնած են: «Եթէ ընտելեամբ չար ինչ էր օձն, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա օգտակար, եւ ոչ զգոնանայր ի գաղափարներէ անտի իւրմէ. նա աւանիկ տեսանեմք ի հնարագիտութենէ թովչաց զգոնացեալ» (74): Օձը շատ անգամ չար աստուածութեան արարած նկատուած է՝ ինչպէս հոս եւ ուրիշ տեղիքներու մէջ կը տեսնուի: Օձի վրայ յետոյ կ'անդրադառնանք: Հասուածիս մէջ Եզեկի ուղղակի ջըսեր, թէ չար ստեղծագործութեան հեղինակը սատանան է. ուրիշ կտորներու մէջ սակայն յայտնապէս սատանայի կը վերագրէ զայն: Եւ երբ չար արարչութեան վրայ խօսք կ'ընէ՝ ժողովրդական այս հաւատքն ունի աչքին առջեւ: Այսպէս՝ գէշ օգիքը յայտնապէս սատանային կամքով յառաջ եկած կը համարուէին. «Ոմանք զանդաչեցին՝ թէ սատանայ ունէր իշխանութիւն չարժելոյ եւ փոփոխելոյ զօգս» (243):

Նոյնպէս ձիւնը, կարկուտն ու մրրիկը չար աստուածութեան կը վերագրէին. «Եւ ձիւն եւ սառն եւ կարկուտ եւ մրրիկը՝ թէ յայլմէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա Հոգին ի փառատրութիւն (իմա՛ փառաւորութիւն), այլ իբրեւ զօտարոտիս մեկուսի դնէր: Բայց

⁴ De civ. dei, XV, c. 23:
⁵ G. H. Schodde, The Book of Enoch, Andover 1882, 66—67: — Otto Zöckler, Die Apokryphen des Alten Testaments. München 1891, 430—431:

նա տեսանեմք աւանիկ՝ զի ոչ զնոսա միայն, այլ եւ զիշխապս եւ զպազանս եւ զխաւար եւ զփայլատակունս, զոր ի չարէ դնեն ի նոյն փառատրութիւն (փառաւորութիւն) նորին Հոգւոյ կոչեցեալ...» (225): Զիւնի, կարկուտի հետ վնասակար համարուած բաներ են երբեմն նաեւ հուրը, հովը եւ այլն, որոնց կարգին կ'երեւայ թէ նաեւ հրեշտակներ (կամ հրեշտակներէն ոմանք) կը համարուէին. վասն զի այս ըլլալու է հետեւեալ խօսքին իմաստը, որ նախորդ տեղիքին հետ ներքին աղերս ունի. «Եւ արդ թէպէտ յայնմանէ իսկ յայտ է թէ որ ինչ ի փառատրութիւն արարչին կոչի, նորա արարած է, այլ եւ զմիոյ իսկ ի նոցանէ զարարած մարթի ի դրոց ցուցանել: Նախ զհրեշտակաց... ապա զհրոյ եւ զայլոցն... եւ զխաւարէ... եւ զօրոտմանէ եւ զհոգմոյ...» (226): Միւս կողմէն ցոյց տալու համար՝ թէ ամէն չար կարծուած բան չի կրնար չար աստուածութեան մը վերաբերիլ, կ'ըսէ. «Եւ յարջառ, զոր ասեն՝ եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն: Զցլու միս ուտել՝ զարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ՝ սատակի» (77):

Երկարատեան վարդապետութիւններու համաձայն են այս տեղիքները: Հնդիկներու, պարսիկներու, դասական կոչուած ժողովուրդներու քով այս հայեացքը բաւական տիրական է: Այս մասին յառաջ կ'ուզենք բերել տեղիք մը միայն՝ Թովմա Արծրունիէն⁶, որ հետեւեալ կերպով կը գրէ Որմըզի եւ Արհմի արարչութեան վրայ. «Որմըզ արար զլոյս, Արհմի արար զխաւար. նա արար զկեանս, սա արար զմահ. նա արար զհուր, սա արար զջուր. նա արար զբարի, սա արար զչար, եւ զի մի՛ մի ըստ միտջէ ասացից, այլ համանգամայն, ամենայն բարիքս Որմըզի է եւ լաւք, եւ չարք եւ դեւք՝ Հարամանոյն»:

Արդի ժողովրդական հաւատքը թէ եւ չար արարչութեան մը աստուածութեան գաղափարը չունի, բայց բազմաթիւ հաւատարիքներով ու ծիսակատարութիւններով ցոյց կու տայ, որ դեռ մինչեւ այսօր բարի եւ չար, սուրբ կամ պիղծ բաներու միջեւ խափ

⁶ Թովմայի վարդապետի Արծրունոյ՝ Պատմութիւն տանն Արծրունեաց. ի լոյս էած Գ. Պ., ի Ս. Պեպարտրդ 1887, 27:

կը դնէ եւ իր երկարատեան նախահայրերուն ըմբռնունքներուն համաձայն կը մտածէ: Բ. Սատանաները մթնոլորտի վրայ կ'իջնեն: Արդէն տեսանք՝ թէ երկնակամարին տակ բարի եւ չար ոգիները միշտ կը կոտլին: Այս հաւատարիքին հիմը փոթորիկն է՝ յարակից երեւոյթներով:

Հրեշտակներն ու դեւերը, «որք կարող են զօգս զնդել եւ պարգել», երկնքի այդ մասին մէջ ամէն ատեն ճակատամարտ ունին: Եզեկի մանրամասնութիւնները կը հաղորդէ. «Ոմանք զանդաչեցին՝ թէ սատանայ ունէր իշխանութիւն չարժելոյ եւ փոփոխելոյ զօգս. ըստ այնմ զոր առաքեալն ասէ՝ թէ ըստ իշխանութեան օգոյս այսորիկ: Իշխան օգոյս այսորիկ կոչէ զնա՝ վասն յերկնիցն անկանելոյ եւ յօղս թափառելոյ. եւ յայտ անտի է զոր ասէ՝ թէ օգոյ խաւարիս այսորիկ. զի ցուցցէ՛ թէ ի լուսոյ ի խաւար կործանեալ է, եւ չէ օգոյն փոփոխիչ՝ մերթ յանձրեւս, մերթ ի ձիւն, մերթ ի կարկուտ: Այլ զի Աստուծոյ զործ է այն եւ ոչ սատանայի, ասացցէ Դաւիթ...» (243—244):

Հոս զմեզ հետաքրքրողը՝ մասնաւորապէս օգարնակ սատանան է: Հին ազգերու դիցարանութիւնը համաձայն է Եզեկի տուած այս պատկերին: Քրիստոնէական առաջին դարերու⁸ մատենագիրները՝ Պօղոս Առաքեալին յիշուած տեղիքին վրայ յեցած՝ բացարձակապէս համոզուած էին, որ սատանաներ կը բնակին օդին մէջ: Եւ որովհետեւ դիտէին թէ սատանաներուն բնակարանը զժոխքն է, անոր համար թէ՛ օդին մէջ եւ թէ՛ զժոխքը կը մտածէին զանոնք: Այս հայեացքն ամենեւին տարօրինակ չէր իրենց համար, քանի որ կ'ընդունէին թէ այդ օգարնակ ոգիները մարդը փորձելու համար կը կենան հոն: Նաեւ համոզուած էին՝ որ Աստուած աշխարհն ու մարդիկը վարելու ատեն՝ հրեշտակները իրեն իբր միջնորդ կը գործածէ եւ թոյլ կու տայ ինկած հրեշտակներուն կամ սատանաներուն, որ ընտելեան ոյժերը ի վնաս մարդկան գործածեն. հրեշտակներն ու սատանաները բնակելոյ թիւններուն վրայ կրնան իջնել: Պօղոս առաքելոյն խօսքէն աւելի քաջախելով՝ Որդիւնէս սատանաները երկիրը չըջապատող

⁷ Հանդ. Ամս. 1929, էջ 638—641:
⁸ Adolph Franz, Die kirchlichen Benediktionen im Mittelalter, 2. Bd., Freiburg im Breisgau, 1909, 23—27:

դէն բաւական են ցոյց տալու՝ թէ մեր նախնայրերն ինչպէս ըմբռնած են խնդրին նիւթ հիւանդութիւնը: Եթէ Եգիպտոսի կամ ուրիշ մատենագիրներէ ո՛չ մէկ յիշատակութիւն հասած ըլլար մեզի այս հիւանդութեան մասին, միայն «գիւհար(ութիւն), այսահար(ութիւն)» բառերը բաւական պիտի ըլլային պարզելու հիւանդութեան ամբողջ էութիւնը:

Այսահարութեան նման շատ հիւանդագիւն երեւոյթներ կան, որոնք սնահաւատ փողովուրդը սատանաներուն կու տայ: Այս պատճառով Եգիպտոսի դէմ կ'ըլլէ այս հայեացքին, սակայն առանց բոլորովին ինք զինքը կորզելու նման հայեացքներէ, որոնք իրեն ժամանակակից ըմբռնումներն էին: Այս մասին կը գրէ. «Եւ ոչ ամենայն թալանաւ եւ ցնորել մարդկան ի դիւէ է, այլ է՝ որ ի մաղձոյ է, եւ է՝ որ ի մաղասէ, եւ է՝ որ յուղձոյն սնանալոյ, եւ է՝ որ ի ստամոքսէ խանդարելոյ, եւ է՝ որ յորովայնէ խտանալոյ, մինչեւ ցիրփրել անգամ եւ զաչս յեղեղուլ... Այլ յուղձոյն սնանալոյ՝ եւ ի մտաց իսկ անկանի մարդ, եւ խօսի ընդ որմս եւ կաղի ընդ հողմս: Ուստի բժիշկք յամառին՝ թէ բնաւ չիք դեւ որ ի մարդ մտանիցէ. այլ ցաւք են այն, եւ մեք զարմանովք կարեմք բժշկել: — Այլ մեք (կ'ըսէ Եգիպտոսի) զայն ոչ ասեմք (107). քանզի... բազում դեւք, իբրեւ տեսանէին զՅիսուս, աղաղակէին եւ ելանէին ի մարդկանէ... Եւ լուսնոտքն որք ասեն, ո՛չ եթէ լուսնոյ վրասեալ՝ այնպիսիք կոչին, այլ զաս ինչ է դիւաց՝ որ ըստ լուսնոյ յայտնին» (208):

Ինչպէս ակնյայտնի կ'երեւայ՝ այսահարութիւնն ու նման երեւոյթներ Եգիպտոսի եւ Ժողովուրդն ուղղակի սատանային կը վերագրեն: Ուստի եւ այդ երեւոյթներուն մէջ խիստ զանազանութիւն մը չեն դներ: Չարմանալու չէ այս բանին վրայ. վասն զի Եգիպտոսի ժամանակ ու անկէ յետոյ՝ Միջին դարու մէջ — ինչպէս միջնադարեան սին հաւատքով պարպած հմուտ հեղինակ մը²¹ կը վկայէ — նոյն իսկ սատանաբաններու քով կարելի չէ եղած գտնել որոշ դատանիչ մը, որուն շնորհիւ կարելի ըլլար ըսել՝ թէ մատենագիրները հիւանդագիւն բնական վիճակներն այսահարութիւնէն կը զանազանէին: Առհասարակ ամէն կարգի հոգեկան կամ մար-

մնական հիւանդութիւն obsessio (գիւհարութիւն) կը նկատուէր. այս կ'արժէր մատենագիրներէն (epilepsie) եւ լուսնոտութեան համար:

Եգիպտացիները²² կ'ընդունէին թէ մեռելներու հոգիներէն ոմանք, որոնք դատարարուած են դժոխքի մէջ, հոն չեն կրնար կենալ եւ աշխարհ կը վերադառնան. հոս անոթեան կը թափառին, մինչեւ որ յաջողին մարդու մը մէջ մտնել, որով վերջինս կը դիւահարի: Կովկասի Չէչէնները²³ կը հաւատան, որ չար ոգիներէն ոմանք կրնան մարդուն հետ բարեկամութիւն ընել. բայց անոնց բարեկամութիւնը վրասակար է, վասն զի գրեթէ միշտ խենթութեան կը տանի մարդը: Անոր համար կը հաւատան, թէ պանդոյրներն ու հոգեպէս հիւանդներն այդ ոգիներուն հետ առնչութեան մէջ են: Վրացիները²⁴ համաձայն՝ ամպրոպի ժամանակ Ս. Գէորգ շանթով կը հետապնդէ սատանաները, որոնք կը ջանան մարդու բերնէն ներս սղորդիլ՝ զայն այսահար ընելու համար: Ջաւախքիները²⁵ հաւատքով՝ յորանջելու ատեն սատանան մարդու փորը կը մտնէ, եթէ չխաչակնքուի. վասն զի չար ոգին միշտ մարդուն մէջ մտնել կը փափաքի: Սրուանձտեանց²⁶ յառաջ կը բերէ. «Մարդ որ օրօշկոտայ, բերնին վրէն խաչ չհանէ, գրողները կը մտնեն մարդու փոր կը դիւահարցուցեն»: Բորչալուի²⁷ մէջ փոնդատու ատեն կը խաչակնքուին. այլպէս սատանան կրնայ փոնդատուին փորը մտնել: Նոր Բայաղէտի²⁸ մէջ նշանաւոր կախարդներ կան, որ «դեւ կը կապեն». այսինքն դիւահարը կէսմութ սենեակի մը մէջ կը նստեցնեն եւ՝ նոյն իսկ ժամերով՝ առջեւը դրուած ջրալիւր ամանի մը մէջ նայիլ կու տան, ըսելով թէ անոր փորը մտած սատանան ուրիշ դեւերու հետ երբ ջուրի մէջէն անցնի, զայն բռնէ եւ իրենց ձեռքը յանձնէ: Եթէ դիւահարը չտեսնէ իր դեւը, կախարդը կը բարկանայ անոր վրայ եւ նոյն իսկ կը ձեռնէ

²² Orelli, I, 177:
²³ A. Dirr-Baschir Dalgat, Die alte Religion der Tschetschenen, Anthropos, III. Bd., Wien 1908, էջ 1051:
²⁴ Bleichsteiner, Kaukasische Forschungen, II, Wien 1919, LXI.
²⁵ Ազգ. Հանդ., II, 329:
²⁶ Մանանայ, 81:
²⁷ Ազգ. Հանդ., X, 249:
²⁸ XVII, 115:

²¹ A. Franz, II, 527—528:

դիւքը, մինչեւ որ այսահարը բռնելու շարժումներ ընէ. այն ատեն կախարդը կը խօսեցնէ դեւը եւ զայն կը կապէ՝ ըսելով թէ այս հիւանդին չմտնեսայ այլեւս²⁹:

Հիւանդութիւնները նմանապէս սատանաներու կը վերագրուէին: Ամէն հիւանդութիւն կ'երեւայ թէ որոշ չար ոգիի մը հետ կապուած էր: Հախառակ անոր, որ ժամանակին բժիշկներէն շատերը կը պնդէին թէ անհիմն է այս կարծիքը, բայց հայ ուսմիկը չէր հրաժարէր անկէ. վասն զի իր սին հաւատքը վաղնջական ժամանակներէ իբր անուր և հեռուոր ազգերը: Իր կատարած տնային բժշկութիւնը ո՛չ թէ իրական բժշկութիւն էր, այլ մեծ մասով կախարդներու ձեռքով հաւաքուած եւ այլազան յուսուածութիւններու կենթարկուած՝ զարմանող նիւթերու գործածութիւնն:

Ասորարարելացիները³⁰ համաձայն երբ պաշտպան սատանութիւն մը բարկանար եւ հեռանար իր պաշտպանեալէն, ասիկա անմիջապէս սատանային ձեռքը կ'իյնար եւ հիւանդութիւններու բանակէ մը յարձակում կը կրէր: Տարբուական բարբոսները որոշ մեղքերու հետ կը կապեն իւրաքանչիւր հիւանդութիւն, զոր շէղիւմ կոչուած սատանաները — եւ մանաւանդ իրենց Աստուծայ պետը — մարդուն վրայ կը զրկեն: Շատ նման են այս հաւատալիքներուն հնդկական, եգիպտական, յուսական եւ ուրիշ ազգերու հայեացքները³¹: Հոսմայեցիները մէն մի հիւանդութեան համար ոգի մը ունէին, որուն կամքին կախում ունէր մարդուն առողջ կամ հիւանդ մնալը: Անոր համար ալ անոնց քով բժշկութիւն չկար հին ատեն եւ Պլինիոս³² շատ չի չափազանցեր՝ երբ կ'ըսէ՝ թէ Հռոմի մէջ 600 տարի բժիշկ չէ եղած:

²⁹ Վասպուրականի ուսմիկը «խպիկ» անունով ոգիներ կ'ընդունէ, որոնք «շատ մանր շար ոգիներ են... մարդկանց յորանջելիս կարող են բերանը մտնել, եթէ որ չեն շտապում խաչակնքուիլ: Իսկ փոնդատուին՝ այս արդէն կու պնդեցնէ խպիկները դուրս եւ նետուած. ուստի եւ ներկայ եղողները բարեմաղթում են՝ թէ «իբր էլին»: Երբ այս խպիկները մտնում են մարդկանց փորը, նրանց խենթացնում են. եւ արամազրում շարունակ իրենք իրենց խօսելու: Ուստի եւ փողովուրդը միամեանց հետ զուարճացող, ստող խօսողների վերաբերմամբ ասում է. Գարձել են խեւ խպիկ»: (Ե. Լալայեան). XXV, 59:
³⁰ O. Weber, Dämonenbeschwörung bei den Babyloniern und Assyern, Leipzig 1906, էջ 185, 244:
³¹ A. Franz, անդ, 400—406:
³² Naturalis Historia, XXIX, 11:

Այս հին հաւատալիքներուն արձագանքը նաեւ եկեղեցական մատենագիրներու քով կը գտնենք: Տատիանոս կ'ըսէ՝ թէ հիւանդութիւնները սատանաները կը զրկեն մարդուն վրայ. իրեն կարծեկից են Մինուկիոս Փելլիքս³³, Տերտուղիանոս³⁴ եւ Իսիդոր³⁵ Սելիւացի:

Արդի սին հաւատքը ո՛չ միայն գրողները կ'ընդունի իբրեւ հիւանդութեան եւ մահուան չար ոգիներ, այլ եւ ուրիշ մանր ոգիներու զանազանութիւն կ'ընէ, որոնցմէ իւրաքանչիւրը հիւանդութիւն մը կու տայ: Ջաւախքի³⁶ մէջ «ժողովուրդը երեւակայում է հիւանդութիւնները որպէս փոքրիկ էակներ», կ'ըսէ Յ. Լալայեան, «գլխներին եռանկիւնածեւ «սըլլիկ» գլխարկ ծածկած: Ձեռներին բռնած երեք ճպտա — կանանչ, կարմիր, եւ սև: Առաջնորդն ստանում է Աստուծոց մի տետրակ, ուր նշանակուած են լինում հիւանդացողների եւ մեռնողների անունները եւ սրանք նայելով այդ տետրակին՝ կանանչ ճիւղտով խփում են նրան, ով դատարարուած է կնրճատեւ հիւանդութեան, կարմրով նրան, ով պիտի երկար ծառայէ անկողնին եւ սեւով նրան, ով պիտի մնաս բարով ասի այս աշխարհին»: Գանձակեցիները³⁷ կ'ուզեն հաւատացնել, որ ցաւերը փոքրիկ երեխաներ են. եթէ (աներեւութաբար) իրենց սեւ գաւազանով զարնեն մէկու մը՝ կը հիւանդանայ ու կը մեռնի. իսկ եթէ կանանչ գաւազանը գործածեն, անով՝ զարնուած հիւանդը կ'առողջանայ: Անոնց առաջնորդութիւն կ'ընէ այդ մը կամ կին մը («գլխը»), որուն հետեւելով՝ անոնք մահ կամ հիւանդութիւն կը տանին ա՛յն տներն, ուր կը մտնեն: Միայն ջերմի ոգին առաջնորդ չունի: Կաղնիի վրայ կը բնակի. անոր համար ջերմ

³³ Octavius c. 27: „Sic daemones... morbos fingunt, terrent mentes, membra distorquent, ut ad cultum sui cogant, ut nidore altarium vel hostiis pecudum saginati, remissis, quae constrinxerant, curasse videantur“.
³⁴ Apologeticus c. 22: „...corporibus quidem et valetudines infligunt et aliquos casus acerbos, animae vero repentinos et extraordinarios per vim excessus“.
³⁵ De ordine creaturarum VIII, c. 16: „Fallacias atque in fraude callidi hominum sensus commovent terroremque mortalibus inferentes, inquietudinibus somniorum et morbis et distortione membrorum vitam turbant, praestigia atque oracula fingent regentesque sortem, cupidinem illiciti amoris et cupiditates humanis cordibus infundunt“ etc.
³⁶ Ազգ. Հանդ., II, 398:
³⁷ 2, 354:

ունեցողներն իրենց վրայէն կտոր մը լաթ կը կտրեն եւ կաղնիներու վրայ կը կապեն, որ այդ լաթին հետ իրենց ջերմնն ալ ծառին վրայ փոխադրուի: Ծաղկի հիւանդութեան ոգին կին մըն է՝ ծաղկամայր անունով. միւս ոգիներուն պէս չար չէ ան, այլ բարի եւ քնքուշ: Արեւն չի սիրեր. այս պատճառով անոր արեւային դոհեր չեն մատուցաներ: Բորչալուցիներու³⁸ համեմատ իւրաքանչիւր հիւանդութիւն տեսանելի ոգի մըն է: Ե. Լալայեան³⁹ Վասպուրականցիներու համար կը հաստատէ, թէ «չատ հիւանդութիւններ, ինչպէս դող, մշտատեւ գլխացաւ, լուսնոտութիւն, սատանաների նիւթած եւ համարում եւ «չարոց» կոչում»:

Չանց կ'ընենք այս տեսակէտով գրողներու վրայ աւելի ծանրանալ, որոնք յիշուած ոգիներուն հետ մեծ նմանութիւն եւ երբեմն նոյնութիւն ունին:

Մախուան պաշտօնեայ կամ հոգեւոր եւ սատանաները, ինչպէս որ քիչ մը վերը Եղնիկ հրեշտակներու եւ դեւերու համար ըսաւ: Թամիկը հաւատք ունի՝ թէ ծնունդի վայրկեանին ամէն երեխայ իրեն համար երկու հրեշտակներ կ'ընդունի. մին բարի, իսկ միւսը չար: Անոնք շարունակ ետեւէ կ'ըլլան, որ մարդը իրենց թելադրութիւններուն հետեւի եւ իւրաքանչիւր իր գրքին մէջ կը նշանակէ մարդուն բարի կամ չար գործերը: Մահուան վայրկեանին դարձեալ երկու հակամարտ հրեշտակներ կու գան՝ հոգեվարժի մէջ եզոզին հոգին գրաւելու. այդ վայրկեանը ձգնաժամային է, ո՛չ միայն կուռող ոգիներուն, այլ նաեւ մահամեծիին համար. վասն զի իր հոգին յաղթող կողմին պիտի վերաբերի: Եւ յաղթութեան պայմանը յայտնի է. եթէ չար կեանք վարած է մարդը, սատանաները կը յաղթեն. իսկ եթէ ո՛չ՝ հրեշտակները: Առաջին պարագային՝ հոգին դժոխք կը տարուի, երկրորդին՝ երկինք:

Ուստի եւ մահուան պաշտօնեայ ոգիները երկու տեսակ են. ոմանք բարի են եւ հոգին երջանկացնել կ'ուզեն. իսկ ոմանք չար՝ եւ զայն դժբախտ ընել կը ջանան:

Գարբիէլ եւ Միքայէլ⁴⁰ հրեշտակապետ-

ները Ժողովրդական համոզումով հոգեւոր հրեշտակներ են: Գարբիէլ չարերը սուրի հարուածով կը սպաննէ. իսկ քարիներու քթին անմահական խնձոր կը մերձեցնէ եւ հոգին առանց ցաւի կ'առնէ:

Պաշտօնապէս հոգեւոր են գրող ոգիները: Իրենց անունն անկից ծագած է, որ դիրք մ'ունին, որուն մէջ հիւանդանալիք կամ մեռնելիք մարդուն անունը կը գրեն եւ կ'ըլլան «գրող»: ԺԸ. դարու առաջին քառորդին՝ Մելքոն Երէց Կեղեցի⁴¹ իր թոռան մահը կ'ողբայ ոտանաւորով մը, որ այսպէս կը սկսի.

«Մահն ու գրողը էկաւ աշխարհիս, տիրեց, Առաւ դիւրիթ, դալամ դէաւտարին գրեց.

Կարմիր գրէն հանեց սեւ գիրն գրեց...»:

Տարօնցիները⁴² գրողներու պատկերը կու տան. «Գրողներաց գլխի ամպերաց մէջն ի, ոտքեր դեմնի տակ անդունդը հասեր ի. իղոնց իրեններ սեւ՝ քանձ Ադամայ մութ, իղոնց մըլթներ (չրթունք) կախուեր ի չում (մինչեւ) ուրենց ծնկուեր. բերընները քանձ Վանայ ծով, լեզուընըր մէջ քանձ Վանայ բերդ, քիթ՝ քանձ Սիփանայ սար: Խոզու պէս մագոտ ի իղոնց լէշ. լմէն մագից բոց կ'էլնի, կրակ կը թափի: Հաւքու պէս թեւ ունին կը թոնեն, իսանի պէս կը քէլեն. մէկ ոտ Բաղդաան ի, մէկ ոտ կը թալի (հասնի) Սեւ ծով. մէկ ձեռ կը խասնի Չինմաչին, մէկ ձեռն կը պարզի Փրանգստան: Ուզեն կը պատիկան կ'էլնեն քանձ լու մը ու անիծ, ուզեն կը դառնան քանձ երկինք գեաին պատող սեւ ամբ մը: Ըմէն գրողն իր սիւտրն ունի. կը պըտտեն, ռաստ էկածին կը դարնեն... մեռնողներաց որու ոտքը, որու թեւ, որու քամակը,

Հայ Ժող. վէպը, 187: Գրիգոր Կաթողիկոս Աղթամարցայն վերագրուած ոտանաւոր մը՝ հետեւեալ տողերով կը խօսի հոգեւոր Գարբիէլի վրայ, Տ. Պալեան, Հայ Աշուղներ, Ա, Չմիւնիա 1911:

«Գարբիէլն էկաւ հոգեւոր,
Ահէն կապեցաւ լեզուս
Խորաւ աչերս ի լուսուս
Ասո՛ղ իմ կարճ արեւուս.
Ասին գհոգիս ի մարմնոյս» (էջ 105):

«Յամէն առաւօտ եւ լոյս
Գայ Գարբիէլն ասէ(ր) հոգոյս
Արի ել...» (104):

«Հրեշտակն է կազներ հոգոյս,
Յահէն կապեցաւ լեզուս.
Եհան գհոգիս ի մարմնոյս,
Ափսո՛ս կանանչ արեւոյս» (151):

⁴¹ Ազգ. Հանդ., Բ, 291:
⁴² Մանանց, 79—80:

³⁸ X, 211:
³⁹ XXVI, 202:
⁴⁰ Էմինեան ազգ. Ժող., Բ., 196, 332. Ազգ. Հանդ. Ե, 182: Յովհաննէս Գաղանձեան, Եւրոպիայ Հայոց դատարարութեան, Վիեննա (Ազգ. Մատենդ. Դ), 1890, էջ 38: Բիւրակն, 1890, 437: Արեւեան,

որու երեսը, որու ուրիշ տեղ մը կը կապուանայ, գրողի զարկած ճպողի տեղն ի»: Բուլանըրցիները⁴³ կ'ըսեն՝ թէ երբ հոգեւոր Գարբիէլ հրեշտակը մեռելի հոգին առած երկինք կը տանի, օդարնակ սատանաներն անոր ճամբան կը կտրեն եւ կը ջանան հոգին անոր ձեռքէն յախշտակել ու դժոխք տանիլ: Նոյներուն հաւատքով՝ գրողը մարդու հոգին աննէլէ յառաջ՝ հոգեվարին բերանը պատա մը կը դնէ. ասոր վրայ մարդը կը մեռնի: Անոր համար Բուլանըրցիներու քով սովորական անէծք մըն է հետեւեալը. «Գրողի բրդուճ դնեմ քու բերան»: Երկու տեսակ հրեշտակ կ'ընդունին Բորչալուցիները⁴⁴. բարիներն սպիտակ են եւ գոյնզգոյն թեւերով, իսկ չարերը՝ սեւ: Միշտ իրարու հետ կը կուռնին հիւանդներու եւ ծննդականներու քով, բարին աջ կողմը, չարը՝ ձախ: Ով որ կը յաղթէ կը տիրանայ անոնց հոգեւոր: Չաւախքիները⁴⁵ կը հաւատան՝ թէ օդարնակ ոգիներու (ինկած հրեշտակներու) պետը «ուղղակի կտրում է հոգիները ճանապարհը եւ եթէ «բարութեան ձեռագիր» չունին, քաշում տանում է դժոխք, սատանաների եւ մեղաւորների կայանը, ուր ոսկի աթոռի վրայ նստած թագաւորում է» անոնց պետը: Ալաշկերտի⁴⁶ հաւատքը նման է ասոր. երբ հոգեւոր հրեշտակները հոգին առած երկինք տանիլ կ'ուզեն, օդարնակ սատանաներն առջեւին կ'եղնեն եւ «մե'րն է» ըսելով կը յարձակին: Եթէ հոգին երկրի վրայ իրապէս չար կեանք անցուցած է, սատանաները կը յախշտակեն զայն եւ սանդարամետ կը տանին: Իսկ Գարբիէլ հրեշտակապետն ու իր ընկերները, որոնք հոգին բերած էին, տիրութեամբ երկինք կը վերադառնան: Բայց եթէ բարի եղած է հոգին, հոգեւոր հրեշտակները զայն երկինք կը տանին: Նոր Բայագէտցիները՝ կ'ըսեն թէ արդարին հոգին Գարբիէլ հրեշտակը կ'առնէ. ձեռքը հրեղէն սուր բռնած անոր կը մօտենայ եւ վարդ մը կու տայ: Մինչդեռ չարին հոգեւորը «չար հրեշտակն» է, որ «գրողի գլխի» առաջնորդութեամբ մեռնելիքին քով կու գայ եւ անոր «արեւաթաթախ հոգին» չիկացած շամփուրի մը մէկ հարուածով մէջէն դուրս կը

հանէ: Վարդի փոխարէն ալ փուշ կու տայ ձեռքը:

Հոգեւոր եւ մահաբեր հրեշտակներու վրայ արդէն Ս. Գիրքը խօսք կ'ընէ, ինչպէս Եղնիկի նիւթիս հայոց տեղիքէն ալ կարելի է արդէն ենթադրել: Գանիէլ⁴⁷ երկու շար ծերերուն կ'ըսէ, անոնց մեռնելէն անմիջապէս յառաջ. «Ահաւասիկ հրեշտակի Աստուծոյ առեալ հրաման հերձցէ գեղ ընդ մէջ... Կայ ահաւասիկ հրեշտակ Աստուծոյ, սուսեր մերկ ի ձեռին սրոցել գեղ ընդ մէջ»: «Եթէ⁴⁸ իցեն հազար հրեշտակ մահաբերք, մի ի նոցանէ զնա մի՛ խոցեացէ: — Մեռցի յերիտասարդութեան անձն նոցա եւ կեանք նոցա խոցոտեալք ի հրեշտակաց»:

Այս հայեացքը կը յիշեցնէ Շարակնոցը, Հրեշտակներու տօնին «Մանկունքին» մէջ. «Բարեկամք ազգի մարդկան, միջնորդք մահու եւ յարութեան. Միքայէլ եւ Գարբիէլ մեծք»: Ժողովրդական հաւատքով է որ կը գոչէ Ներսէս Ծնորճալի. «Բարերար Տէր, հրեշտակի բարոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. եւ անխոով անցուցանել ընդ շարութիւն այսոցն, որ են ի ներքոյ երկինց»: Ննջեցեալը կը խօսեցնէ. «Եկն եհաս օր վախճանի իմոյ... ի մահիճս իմ զարթուցին զիս պահանջողք հոգւոյ իմոյ. տանէին զիս ճանապարհ հեռաւոր դուր ոչ գիտէի. ... նայեցայ եւ ոչ ոք էր որ օգնէր ինձ. ապաւինեցայ յԱստուած — գրեցայ ես ի գիր կենդանութեան»:

Արդի Ժողովուրդներու հաւատքէն համեմատեալ գերմանական ու յունականը: Առաջիններու մէջ⁴⁹ զեռ հաւատացողներ կան, որ մէկու մը մահուան ժամուն՝ հրեշտակներու եւ սատանաներու բանակները դառն կուռ մը կը մղեն, անոր հոգին գրաւելու համար: Գարով Յոյներուն⁵⁰, գրեթէ կէտ առ կէտ կը համաձայնի անոնց սին հաւատքը՝ հայկականին. Միքայէլ հրեշտակապետն Աստուծոյ կը զրկուի որ մեր հոգիները տանի: Մարդը երկու հրեշտակ ունի. բարի եւ չար. բարին, մարդուն աջ ունին վրայ է, չարը՝ ձախին: Մեր «գրողի զարկած» բացատրութիւնն է իրենց ἀγγελοζοοΐω,

⁴⁷ ԺԳ, 55, 59:
⁴⁸ Յովք, 1Գ, 24. 1Զ, 14:
⁴⁹ E. L. Rochholz, Deutscher Glaube und Brauch, I. Bd., Berlin 1867, 168—169:
⁵⁰ G. N. Hatzidakis, Ἄγγελος und Verwandtes, Wien (Sitzber. d. kais. Ak. d. Wiss., phil.-hist. Kl., 173. Bd., 2. Abh.) 1913, 1—11:

⁴³ Ազգ. Հանդ., Զ, 7 եւ 8:
⁴⁴ X, 204:
⁴⁵ Ա, 329:
⁴⁶ IX, 267: Նոր Բայագէտցիներու հայեացքը, XVI, 58:

ἀγγελοχροούμαι = «հրեշտակէ կը զարնուիմ, կը մեռնիմ» բառերը. ἀγγελοχρουστος = հրեշտակէ զարնուած, «գրողի զարկած, հրեշտակակոխ» բառի է: Արդարեւ թուրքերէն հանդարտ ու առանց կռուի կը մեռնին, անոր համար Կիւրոսի Յոյները կ'ըսեն. ἀγγελοχαιδέουμαι, ἀγγελοχαιδέμενος = հրեշտակէն փայտալուծել, սիրուել:

դ. Չար երազները սատանայէն են: Խօսքն առ հասարակ ամէն տեսակ գէշ երազի մասին է. երազ մը որ սարսափելի, օրհասական եւ գրգռիչ նկարագիր ունի սատանային կը վերագրուի: Վերջին տեսակին վրայ յատկապէս կը ծանրանայ Եգիպտոսը:

Ըստ Եգիպտոսի կարելի է բան մը երազել, որուն մասին մարդ ցերեկը մտադրազ չէ եղած: Այս յառաջ կու գայ երկու պատճառներէ. նախ «յաստուծոյ շնորհացն ազդեցութենէ»: Եւ մի իմն (իմա՝ միւսն⁵¹) ի հակառակորդէն. քանզի նա անմարմին է, որպէս շունչ մարդոյն անմարմին. եւ անհալ կերպարանս առաջի նկարէ, մերթ վկանաց՝ վասն ի ցանկութիւն գրգռելոյ, եւ մերթ դահագին գազանաց եւ զսողոց՝ վասն զարհուրեցուցանելոյ. որպէս եւ Յօրն ասէ՝ թէ եւ երազովք զարհուրեցուցանես զիս: Եւ բազում անգամ ի կանաց կերպս եղեալ, զարս խաբէ յերազի. եւ է երբեք յարանց կերպս զարձեալ, զկանայս յանցուցանէ: Իբր ոչ եթէ արուական եւ իզական անդամք կայցեն նորա, այլ խողտեալ զաման ցանկութեանն՝ տայ հեղուլ ի բաց զարութիւնսն: Եւ ոչ յորժամ ի մարդ մտեալ իցէ, եւ յարուական եւ յիզական բարբառս պատճառիցի, պարս է հաւատալ, թէ արութիւն կամ իզութիւն գուցէ նորա» (205—206):

Ռամկական հաւատքը կ'ընդունի շատ անգամ՝ թէ շար ոգիները երկու սեռի են: Ասոր փաստ կը նկատէ ո՛չ միայն այդ երազները, այլ նաեւ դիւահարին հանած ձայնը, որ երբեմն կ'նոջ ձայն է, երբեմն ալ այլ մարդու:

Ընդհանուր գիցարանութիւնը յիշուած յատկութեամբ երազի ոգիներու գոյութիւնը կը սորվեցնէ: Իսկ համեմատական գիցարանութիւնն այս ոգիներուն մէջ լուսնային տես-

սագծեր կը պսնէ: Լուսինը սեռային կեանքի ամենայայտնի ատուածութիւններէն մէկն է. անոր համար ալ երազի ոգիներն անոր նկարագրէն մաս մը ունին:

Նիւթիս հայոց ժողովրդական հատուած մը հետեւեալը⁵² կը պատմէ (Բուլանթիս). «Կ'ըսեն Նոյն օր մտաւ տապան, ջրհեղեղի վախտ՝ Նոյայ սողկներուց մէկն չկրցաւ օր զինքը զաւթել (գալել), յեղաւ ուր անկողին, աղջիկ մ'եղաւ ուրին: Ջրերն օր յիջան՝ Նոյն ու ուր ճժեր դուս պտի յեղին, էն աղջիկ մնաց ներս, հրեշտակն եկաւ հարցուց, թէ՛ «Նո՛յ, էլ մարդ չմնաց ի ներս»: — «Չէ՛» ըսեց Նոյ: — «Թէ մարդ մանցեր է՛ եղնի՞ աներեւութք»: — «Թ՛ըղ եղնի՛», ըսեց Նոյ ուր ասուն (վախէն): Էն սխաբին աղջիկն եղաւ աներեւութ փէրի. յընկաւ աշխարհք, քնու մէջ մօտեցաւ մարդկաց հետ, դու ցեղ շատցուց: Մարդ օր մկա (հիմա) յերազարտորձ կ'եղնի, սարաքն (պատճառը) ի՞նչ է, — էգ փէրիքն են»: Էնկիւրի⁵³ հայերը «բերի գրգը, հիւրիւ գրգը, սարը գրգը» կը կոչեն այդ ոգիները. «Կը նկարագրուին միջահասակ, նկնահասակ, զեղին ու երկայն մազերով գեղազէմ էգ ոգիներ: Կը բնակին աղբիւրներու շուրջը, շատ անգամ բաղնիքներու մէջ: Գիշերը լուսնի հետ կ'ելլեն, անոր հետ կը մտնեն իրենց տեղերը: Ասոնք սիրահար են երիտասարդներու. իբր թէ գիշերն անոնց քնացած ատեն, իրենց սիրահարական կիրքերն ի գործ դնելով՝ կ'անհետանան»: Չարոց ըրիսէն (երեխան) իսանից կ'ընի: Իսանին խարում ան, սատանախար (երազարտորձ) ան գցում, իսանից ըրիսայ ա ընում. համա հըմէն էգ ան ընում, — չարոց որձը չ'ինի» ըստ Աստապատցիներու⁵⁴: Չաւաթիցիները⁵⁵ գժօխքի երկսեռ հրեշտակներուն կը վերագրեն շար երազները: Նոր Բայազէտի⁵⁶ շուտս ըսուած ոգիները միշտ կը ջանան մարդը խաբել եւ հրապուրել. ասոնք մահկանացու են եւ ծնունդով կը բազմանան: Փետրուար ամիսը շուտսի ամիս կ'ըսուի, վասն զի այն ատեն անոնց արիւնը կը տաքնայ եւ երազներով կը հրապուրեն

⁵² Ազգ. Հանդ., 2, 12:
⁵³ Բիւրակն, 1899, 534. հմտ. 70, 520, 522—523, 540, 569, 668:
⁵⁴ Տ. Նաւասարդեան, Հայ ժողովրդական հէքիաթներ, է. գրք, Թիֆլիս 1891, 29. հմտ. Abeghian, Der arm. Volksglaube, 35—36:
⁵⁵ Ազգ. Հանդ., Ա, 332:
⁵⁶ XVII, 107:

⁵¹ Բնագրին «մի իմն» ընթերցուածը սխալ գրչութիւն է եւ իմաստը կը պահանջէ, որ «միւսն» կարդանք: Այսպէս կ'առաջարկէ սրբատուութեամբ Ածառեան, Քննութիւն, էջ 91—92:

մարդիկը: Եւրոպիացիները⁵⁷ սատանային երկու աղջիկ կու տան՝ Սիլի եւ Բլիկ անուններով, որոնք դժօխքին դուռը կը պահպանեն:

Վերջապէս յիշենք նաեւ Եգիպտոսի⁵⁸ մէկ տեղիքը, որ Եգիպտոսի հետ սերտ առնչութիւն ունի. «Ապա ընդէ՛ր ոմանք ի նոցանէ (դեւեր, առհասարակ ոգիներ) ուտեն եւ ըմպեն եւ ընդ կանայս խառնակին եւ երգս եւ եղանակս երգեն...», կը հարցնէ ումիկը: «Այն ինչ զի ամենայն դեւք անմարմինք են, յայտնի է», կը պատասխանէ Եգիպտոսը. «... քանզի ոչ ուտեն եւ ոչ ըմպեն, որոց եւ ոչ է մարթ ընդ կանայս ամուսնանալ, եւ ի նոցանէ ծնունդ լինել. քանզի որ անմարմին է, նոյն եւ անսերմ է. զի սերմ մարմնաւորաց է եւ ոչ անմարմնոց. որոց եւ ոչ ծնունդ գոյ եւ ոչ մահ»: Ինչպէս կը տեսնուի Եգիպտոսի առջեւ ունի նաեւ հրեշտակներու ամուսնութիւնը, որուն վրայ արդէն խօսք ըրինք:

Միջին դարու incubus ու succubus շատ կը զբաղեն ժողովուրդին միտքը:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆՆԻԱՆ



ՀՅՅԵՐԷՆԻ ԱՄԲՈՆԸ ԲՐԻՒՍԷԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԵՆՈՒՄ

Այսօր տեղի ունեցաւ այստեղ, Բրիւսէլում, «Արեւելեան Բանասիրութեան եւ Պատմութեան Կաճառի» (Institut de philologie et d'histoire orientales) հանդիսաւոր բացումը, որի մի ճիւղն է «հայերէն լեզուի եւ պատմութեան» ամբիոնը: «Հանդէս Ամսօրեայ»-ի 1930, Դեկտ. համարում ես արդէն պատմել եմ այս ամբիոնի ծագման եւ հաստատութեան պարագաները:

Համալսարանի Վարչութեան կողմից բաղմամբիւ հրաւիրագիրներ էին ուղղուած գիտական հաստատութիւններին եւ տեղացի ու օտար զիւանադիտական շրջաններին: Համալսարանի Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղի (Faculté de Philosophie et des Lettres) դահլիճը լի էր երկսեռ ընտիր հասարակութեամբ, որի մէջ կային մեծ

թուով հայեր, երբ ժամը 15ին համալսարանի վերատեսուէր. պ. G. Smets բացման ճառն արտասանեց: Նա խորին շնորհակալութիւն յայտնեց Կաճառի հիմնադիր նուիրատուին, որի անունը զգուշացաւ տալ, ինչպէս որ առանձնապէս խնդրել էր բարերարը: Վերատեսուէրն ի մէջ այլոց իր ուրախութիւնը յայտնեց, որ հայերէնը եւս պսուհեաւել իր կանոնաւոր բաժինը պիտի ունենար Բելգիական համալսարանի բարձրագոյն դասընթացների մէջ: Այնուհետեւ խօսեցաւ Պրոֆ. Գրէգուառ (Henri Gregoire), որ նորահաստատ Կաճառի Փոխ-Նախագահն է եւ իսկական ղեկավարը: Նա պատմեց թէ ի՞նչ պարագաներուն է հիմնուած այս գիտական հաստատութիւնն եւ թէ նուիրատուն, որի անունը նոյնպէս զգուշացաւ տալ (բայց «Հանդէս»-ի ընթերցողին յայտնի է), կամք է յայտնել, նոյն իսկ աւելցնել իր դրամական նպաստը, Արեւելեան Կաճառն եւս աւելի յառաջացնելու համար: Պ. Գրէգուառ երկարօրէն խօսեցաւ հայերէնի ամբիոնի կարեւորութեան վրայ, ծանօթացրեց ընտրուած ուսուցչապետի, Նիկող. Ազոնցի անձնաւորութիւնը եւ շնորհակալութիւն յայտնեց Համալսարանի կողմից այն հայերին, որոնք իրենց տարեկան որոշ նուիրատուութեամբ սատարեցին հայերէնի ամբիոնի հիմնուելուն: Կաճառի հիմնադրամի կողմից որոշուած գումարի վրայ, այդ նպատակի համար, մի քանի հայ բարերարներ որոշեցին նոյնչափ գումար եւս իրենց կողմից յատկացնել, որով կարելի եղաւ գոհացուցիչ վարձատրութիւն նշանակել հայերէնի ուսուցչապետին: — Երրորդ խօսողն էր Պրոֆ. Նիկ. Ազոնց, որ արտասանեց զաղ. լեզուով իր առաջին դասախօսութիւնը՝ նիւթ առնելով «Հայերէնի ուսման կարեւորութիւնը» (L'Importance des Etudes Arméniennes) եւ մի հմտալից ու բովանդակալից ճառի մէջ ջատագովեց հայերէն լեզուի եւ պատմութեան կարեւորութիւնը ինչպէս բանասիրութեան նոյնպէս եւ Պատմութեան, առանձնապէս բիւզանդագիտութեան տեսակէտից: Պրոֆ. Ազոնցի ճառը ընդունուեց ընդհանուր ծափահարութիւններով: Այնուհետեւ խօսեցաւ Պարիզի Collège de France-ի ուսուցչապետ, կրօնների պատմութեան մասնագէտ Պրոֆ. Մ. Յանսկի (M. Jean Przylusky) — «Իրանական ազդեցութիւնը Հնդկաստանի եւ Յուդայական վրայ», որ

Միջին դարու incubus ու succubus շատ կը զբաղեն ժողովուրդին միտքը:

⁵⁷ Գազանճեան, անդ., 22:
⁵⁸ Հարցմունք, 13: